109 Ես հավիտյան հանգիստ կըլլամ

1. Ես հավիտյան հանգիստ կըլլամ
Միայն Քու քովդ, Հիսո՛ւս.
Քու վերքերեդ կյանք կստանամ,
Փրկի՛չ, Դուն ես ինձ հույս:

Կհավատամ, կհավատամ,
Որ Հիսուսի մահվամբ
Եվ Իր Արյամբ, անգին Արյամբ
Մեղքե ազատ կըլլամ:

2. Խաչյալ Փրկիչս և իմ Աստվածս,
Մեղաց քավիչ Աղբյուր,
Քու արյունեդ սրսկե վրաս,
Պահե՛ զիս միշտ մաքուր:

3. Լվա՛ զիս, Տե՛ր, և Քուկդ ըրե,
Լվա՛, եղի՛ր Դուն իմս:
Ոչ թե միայն ոտքերս լվա,
Ձեռքերս, գլուխս և սիրտս:

4. Քու արյունովդ սիրտս սրբե,
Մինչ Քեզ տեսնեմ աչքով,
Փառաց հույսով աչքերս գոցե,
Հոգիս լեցվի սիրով: